Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ <<**Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ ենթակա ուսուցիչների վերապատրաստում**>>

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ Ուղղագրության ուսուցումը «Խճանկար կամ Զիգսո» մեթոդով**

**ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝** Մարտունի

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Հասմիկ Բեյբության

**ՈՒՍՈՒՑԻՉ՝** Արմինե Գևորգյան

**ԴՊՐՈՑ՝** <<Ն.Գետաշենի Ա.Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց>>

Մարտունի - 2022թ.

**Բովանդակություն**

Ներածություն……………………………………………………………..3

Գրական ակնարկ …………………………………………………………6

Փորձարարական հետազոտություն ……………………………………10

Խմբի նկարագիրը………………………………………………………….10

Փորձարարական դասեր ………………………………………………………11

Փորձարարական դաս 1……………………………………………..…..11

Փորձարարական դաս 2………………………………………………….12

Վերլուծություն ……………………………………………………………..13

Գրականության ցանկ…………………………………………………14

Հավելված ………………………………………………………………15

Դասապլան 1……………………………………………………….15

Դասապլան 2………………………………………………….17

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը**: Ուղղագրությունը հայոց լեզվի կարևորագույն բաժիններից մեկն է, որի ուսուցումը չի

կորցնում իր թարմությունն ու արդիա-կանությունը. գրագետ սերունդ կրթելու գործում մեծ դեր ունի ուղղագրության ուսուցման արդյունավետ կազմակերպումը, ինչն իր մեջ ներառում է թե՛ ճիշտ մեթոդների ընտրությունը, թե՛ վարժությունների բազմակողմանի ուղղվածություն ունեցող համակարգի գործադրումը, թե՛ ուսուցման կազմակերպման արդյունավետ ժամանակահատվածի ընտրությունը, թե՛ այդ ուղղությամբ տարվող աշխատանքների հետևողականության ապահովումը:

Անշուշտ, տարրական դասարաններում ուղղագրության ուսուցումն սկսվում է գրաճանաչության ուսուցմանը զուգընթաց և շարունակական բնույթ կրում՝ զուգորդվելով լեզվական տարրական գիտելիքների ուսուցման հետ և ընդգրկելով գործնական աշխատանքների ամենաբազմազան առաջադրանքներ, քանի որ ուղղագրության ուսուցումը մայրենիի դասավանդման այս փուլում ունի առավելապես գործնական դրսևորում: Ուղղագրության ուսուցման մեթոդների բազմազանության ապահովման հարցը մայրենիի մեթոդիկայի մշտապես արդիական մնացող խնդիրներից է հատկապես հետաքրքրական վարժությունների կիրառման տեսանկյունից, քանի որ միայն մեխանիկական արտագրությունները և թելադրությունները չեն կարող լիարժեք լուծել կրտսեր դպրոցականի ուղղագրական կարողությունների ձևավորման և այդ առումով՝ երեխայի գրագիտության հարցը:

**Ուսումնասիրության նպատակը**: Ուսումնասիրելով ուղղագրության ուսուցման սկզբունքներն ու մեթոդները՝ քննել ուղղագրական կարողությունների ձևավորման գործընթացի արդյունավետության բարձրացման հնարավորությունները հետաքրքրաշարժ վարժությունների կիրառման դեպքում և առաջադրել հետաքրքրաշարժ վարժությունների համալիր:

**Ուսումնասիրության խնդիրներն են՝**

1. ուսումնասիրել ուղղագրության ուսուցման սկզբունքներն ու մեթոդները և ուղղագրական կարողությունների ձևավորման գործընթացը.

ուսումնասիրել հետաքրքրաշարժ վարժությունների դերը բաղաձայնների ուղղագության ուսուցման գործընթացում:

**Ուսումնասիրության նորույթը**: Ուղղագրական կարողությունների ձևավորման գործընթացում հետաքրքրաշարժ վարժությունների կիրառման ազդեցության ուսում-նասիրությունն ու վերլուծությունը նոր մոտեցում կարող է լինել ուղղագրության ուսուցման հիմնական ձևերի՝ արտագրությունների և թելադրությունների շղթայում:

**Ուսումնասիրության տեսական նշանակությունը**: 5-րդ դասարաններում ուղղագրության ուսուցման մեթոդների և հետաքրքրաշարժ վարժությունների համա- կարգի կիրառումն ու դրա վերլուծությունը, կարող են նպաստել ուսումնական գործընթացի կազմակերպման տեսական հիմունքների սահմանմանը և մեթոդական նոր հնարների մշակմանը:

**Ուսումնասիրության գործնական նշանակությունը**: Ուղղագրական կարողությունների ձևավորման գործընթացը երկարատև ու մի քանի հաջորդական փուլերից բաղկացած աշխատանք է ենթադրում, ուստի ուղղագրության ուսուցման մեթոդների տեսական ուսումնասիրությունը և գործնական առաջադրանքների կամ հետաքրքրաշարժ վարժությունների համակարգումը կնպաստեն ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանն ու կատարելագործմանը:

Ուղղագրական օրինաչափությունների ուսուցումը, ըստ էության մեծապես նպաստում է ոչ միայն ճիշտ գրելու, այլև անսխալ կարդալու կարողության մշակմանը և հսկայական նշանակություն ունի մարդու լեզվական կուլտուրայի բարձրացման համար: Հայտնի է, որ ուղղագրական սխալները ոչ միայն մթագնում կամ աղավաղում են բառի իմաստը, այլև փոխում նախադասության միտքը կամ երկընտրանքի կասկածի տեղիք տալիս:

Նման շփոթումներից խուսափելու համար հենց առաջին դասարանից սկսած՝ որոշակի աշխատանք պետք է տանել աշակերտների մեջ անհրաժեշտ ուղղագրական կարողություններ մշակելու ուղղությամբ: Դրա համար երեխաներից ոչ միայն մտավոր լուրջ գործունեություն է պահանջվում այլև

լսողության, տեսողության, խոսելու օրգանների և ձեռքի մկանային համակարգի զարգացման նպատակով տարվող վարժությունների կատարման համբերատար ու հետևողական աշխատանք, որովհետև միայն այդ բոլորը համատեղ վերծված կարող են նպաստել բառի գրության մտապահմանը: Մայրենի լեզվի տարրական դասընթացում ուղղագրության ուսուցման առանձին բաժին չկա, սակայն ուղղագրության ուսուցումը կազմում է այդ դասընթացի[1] հիմնական խնդիրներից մեկը, քանի որ առանց ուղղագրության և ուղղախոսության տարրական գիտելիքների դժվար է պատկերացնել կարդալու և գրելու, բանավոր և գրավոր խոսքի ուսուցումը:[1]

Հայերենի ուղղագրության մեջ տարբերակվում են մի քանի բաժիններ.

1. Ձայնավորների ուղղագրություն, որի մեջ մտնում է օ (ո), է (ե), ը ձայնավորների ուղղագրությունը բառասկզբում և բառամիջում, ո, ե, երկհնչյունը, և երկհնչյուն կամ եռահնչյուն և-ի ուղղագրությունը բառասկզբում և բառամիջում, ը-ի և և-ի ուղղա- գրությունը տողադարձի ժամանակ:
2. Երկհնչյունների ուղղագրություն, որի մեջ մտնում է յու, յա, յո, յե, յի և այ, ույ, ոյ, եյ երկհնչյունների, այսինքն՝ յ կիսաձայնի և ա, օ, ու, ի, է ձայնավորների կապակ- ցությունների ուղղագրությունն:
3. Բաղաձայների ուղղագրություն, որի մեջ մտնում են երկաստիճան և եռաստիճան այն բաղաձայների ուղղագրությունը, որոնք իրենց տեղերը փոխում են արտասանությամբ շատ նման իրենց համապատասխան զույգերի հետ (բ-փ, գ-ք, դ-թ, ձ-ց, ջ-չ, ղ-խ, հ) և որոնց ուսուցումը մեծապես կապում է նաև ուղղագրության հետ:

Միջին դասարաններում ուղղագրության ուսուցումը, ըստ էության, միաձուլվում է մայրենի լեզվի ամբողջ դասընթացի հետ և ամբողջ ուսումնառության ընթացքում մատուցվում է փոքրիկ բաժիններով, որոնք տրվում են որոշակի ընդմիջումներով, որպեսզի հնարավոր լինի այդ ընթացքում

[1]

ուսուցված կանոնը լրիվ յուրացնել տալ: Այս առումով ուղղագրության ուսուցումն իսկապես բազմաթիվ թելերով միահյուսվում է լեզվի ուսուցման ուղղությամբ տարվող մյուս բոլոր աշխատանքների հետ՝ որպես դրանց բաղկացուցիչ մաս: Հայերենի ուղղագրության մի զգալի մասն էլ զուտ քերականական հիմք ունի և առանց քերականական հիմնական օրինաչափությունները բացատրելու, հնարավոր չէ դրանց ուսուցումը ապահովել: Ուղղագրության այս բանժնի ուսուցումն սկսվում է դեռևս գրաճանաչության շրջանից և շարունակվում մինչև ոչ միայն տարրական, այլ և համակարգված դասընթացի ուսուցման ավարտը:

## Գրական ակնարկ

«Խճանկար կամ Ջիգսո» մեթոդը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների և որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները: Մեթոդին բնորոշ հատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և սովորողի, և սովորեցնողի դերերում:

## Մեթոդի նպատակները

1. Նպաստել առաջադրված նյութը տարբեր կողմերից ուսումնասիրելուն` անդրադառնալով թեմային առնչվող տարբեր ոլորտներին:
2. Նույն նյութի մասին տարբեր աղբյուրներ ուսումնասիրելու հնարավորություն ընձեռնել:
3. Ընկերների հետ համագործակցելով` օգնել գտնելու առաջադրված հարցերի պատասխանները:
4. Մշակել փորձագիտական կարողություններ` ըստ տրված նյութի ամբողջացնելու և հաղորդելու տեղեկատվությունը:
5. Հնարավորություն ստեղծել միաժամանակ դառնալու և սովորող և սովորեցնող:
6. Նոր նյութը յուրացնել արդեն դասարանում:

## Խճանկարի փուլերը

| Փուլը | Նկարագրությունը |
|---|---|
| Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում | Աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում են տեղեկատվություն: |
| Աշխատանք փորձագիտական խմբում | Փորձագիտական խմբերի աշակերտները համեմատում և հարստացնում են իրենց նյութերը: |
| Աշխատանք ուսումնական խմբում | Յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման: |
| Ավարտական աշխատանք | Աշակերտները անհատական ստուգողական են հանձնում ամբողջ թեմայից: |
| Ամփոփում | Արդյունքներն ամփոփում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների: |

**«Խճանկար»-1**

1. Թեման բաժանել առանձին ամբողջական մասերի, հատվածների: Կարևոր է հաշվի առնել աշխատանքը կատարող աշակերտների գիտելիքները և, եթե անհրաժեշտ է, ընտրել տարբեր բարդության ու հագեցվածության հատվածներ:

2. Ստեղծել չորս-հինգ հոգուց բաղկացած համագործակցային խմբեր (նպատակային խմբեր ձևավորելիս հնարավորության դեպքում հաշվի առնել սովորողների հետաքրքրություններն ու ցանկությունները):

3. Համագործակցային խմբերում մասնակիցներին համարներ են տրվում (1,2,3,4...):

4. Նույն համարները կրող մասնակիցները միավորվում են նոր՝ փորձագիտական խմբերում ( 1.1,1...; 2.2,2... և այլն): Յուրաքանչյուր փորձագիտական խմբի տրվում է առանձին առաջադրանք (օրինակ՝ եթե նյութը հատվածների է բաժանվել, փորձագետների 1-ին խումբը կաշխատի նյութի առաջին հատվածի վրա, 2-րդ խումբը՝ երկրորդի և այլն):

Խմբային աշխատանքների ընթացքը կախված է հատվածի, նյութի կամ ուսումնասիրվող ոլորտի առանձնահատկություններից: Առանձին դեպքերում սովորողներն իրենք կարող են մշակել իրենց խմբի աշխատանքային պլանը: Իսկ սա իր հերթին պայմանավորված է նրանով, թե «Խճանկար» մեթոդը դասի ընթացքում կամ ուսուցման մեջ ինչ տևողությամբ է կիրառվում:

- Առաջադրանքը կատարելիս աշակերտները կարող են դասագրքի տրված գլխից տարբեր հատվածներ, նույն թեմայի վերաբերյալ տարբեր կարճ պատմություններ կամ նույն հեղինակի այլ պատմվածքները կարդալ:
- Առանձին հետազոտությունների առարկա կարող են դառնալ ժամանակակից մոտեցումները տվյալ հարցի վերաբերյալ:

5. Մեթոդի ամփոփիչ քայլն այն է, որ աշակերտները վերադառնում են համագործակցային խմբեր և հաշվետվություն են տալիս

խմբին իրենց փորձագիտական խմբի ուսումնասիրած նյութի մասին՝ հանդես գալով նաև ուսուցանողի, սովորեցնողի դերում.

- ներկայացվում են խմբային քննարկումների, աշխատանքների արդյունքները,
- աշակերտները իրենց սովորածը սովորեցնում են միմյանց,
- միավորվում, ամբողջանում են գիտելիքները:

6. Ամփոփիչ փուլը առաջանում է, երբ համագործակցային խմբերը 2-3 րոպեի ընթացքում ամբողջ դասարանին իրենց նախընտրած ձևով ներկայացնում են թեման:

Ուսուցիչը թեմայի ամփոփման տարբեր հանձնարարություններ կարող է տալ («Ո՞րն էր ամենակարևորը», «Համառոտ ձևակերպե՛ք թեմայի գլխավոր գաղափարը», «Ինչի՞ վրա խումբն առավելագույն ուշադրություն դարձրեց»...):

Այս քայլը հնարավորություն է տալիս միևնույն նյութն ամփոփել և գնահատել տարբեր տեսանկյուններից և մի քանի անգամ:

«**Խճանկար**»-2

***Մեթոդի նկարագրությունը***

1. Աշակերտները աշխատում են 4 հոգանոց թիմերով (համագործակցային խմբերով): Խմբի անդամներին տրվում են տարբեր փորձագիտական թերթիկներ: Փորձագիտական թերթիկներում զետեղված հարցերը նպատակ ունեն ուղղորդելու տվյալ աշակերտի ընթերցանությունը: Թերթիկները տարբեր են, քանի որ հետագայում տարբերվելու են աշակերտների պարտականությունները: Նրանք օգնելու են հիմնական խմբին՝ համակողմանի յուրացնելու իրենց վստահված և փորձագիտական թերթիկում նշված հատվածը:

2. Աշակերտներին տրվում է որոշակի ժամանակ՝ ամբողջ նյութը կարդալու համար: Բոլորը պետք է նյութը կարդան ամբողջությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն հատվածներին, որոնք պատասխանում են իրենց փորձագիտական

թերթիկում նշված հարցերին և համապատասխան գրառումներ անեն:

3. Աշակերտները վերախմբավորվում են ըստ թերթիկների՝ կազմելով փորձագիտական խմբեր, որտեղ նրանք քննարկում են թերթիկում նշված հարցերը: Յուրաքանչյուր խմբում ընտրվում է քննարկումը վարող անձ: Ուսուցիչն այդ ընթացքում շրջում է խմբերում որպես մասնակից, անհրաժեշտության դեպքում պարզաբանումներ անում:

4. Փորձագետները վերադառնում են իրենց նախնական համագործակցային խմբերը և ընկերներին սովորեցնում փորձագիտական խմբում յուրացրածը: Փորձագետները ոչ միայն զեկուցում, այլ և պատասխանում են հարցերին և հավաստիացնում, որ բոլորը յուրացրել են տվյալ հատվածը:

5.Վերջին քայլը գնահատումն է: Ուսուցիչը կարող է առաջարկել աշակերտներին գրավոր նշել, թե ինչ ներդրում են իրենք ունեցել խմբի ընդհանուր աշխատանքում:

Մեթոդը կիրառման լայն հնարավորություններ ունի: Այն հավասարապես կարող է օգտագործվել բոլոր առարկաների դասերին: Առավել նպատակահարմար է կիրառել հատկապես ծավալուն, փաստերով ու տվյալներով հագեցած նյութերի վրա աշխատելիս: «Խճանկարը» հիմնականում դասի իմաստի ընկալման փուլի մեթոդ է, որը, սակայն, ներառում է նաև կշռադատման փուլը:

***Մեթոդի առավելությունները***

- Նյութի բազմակողմանի և ավելի խոր ուսումնասիրություն,
- խմբային աշխատանքը հեշտացնում է նյութի ընկալումը,
- աշակերտը հանդես է գալիս և՛ սովորողի, և՛ սովորեցնողի դերում, որն էլ ստիպում է լինել ուշադիր և պատասխանատու,
- ժամանակի ճիշտ և արդյունավետ օգտագործում,
- հաշվետու լինելու կարողության և անձնական պատասխանատվության ձևավորում,

- նյութը ներկայացվում է բազմապիսի ձևերով, ինչն էլ ընկալման ու կրկնության բազմաթիվ հնարավորություններ է ընձեռնում,
- մոտիվացիաև հետաքրքրությունների բավարարում,
- նոր նյութի յուրացում:

***Մեթոդի սահմանափակությունները***

-անհրաժեշտ ռեսուրսների ոչ բավարար քանակ,

-հետաքրքրությունների, աշխատանքի ծավալի և ժամանակի անհամապատասխանություն:

## Փորձարարական հետազոտություն

***Ասա՛ ինձ և ես կլսեմ, ցու՛յց տուր ինձ, և ես կ***

***շեմ, մասնակի՛ց դարձրու, և ես կհասկանամ:***

*Չինական ասացվածք*

**Խմբի նկարագիրը**

Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի դպրոցի 5-րդ դասարանում, քանի որ այս դասարանում սովորողների մի մասը չի ներգրավվում դասապրոցեսին և ունեն ուղղագրության հետ կապված որոշ դժվարություններ: Այդ իսկ պատճառով ես որոշեցի այդ աշակերտների նկատմամբ կիրառել համագործակցային ուսուցում, ինչը կնպաստի նաև զարգացնել նրանց մոտ տեքստերի հետ ճիշտ աշխատելու հմտությունները, դառնալ ավելի ինքնուրույն և հետ չմնալ ուսումնական ծրագրերից:

Այս դասարանում սովորում են 27 աշակերտ՝ 11 աղջիկ և 16 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: մայրենի առարկան անցնում են շաբաթական 7 ժամ և դասացուցակում այն տեղադրված է 1-6-րդ ժամերին: Իմ հետազոտական աշխատանքը որոշեցի

իրականացնեմ 8 աշակերտների համար,որոնց կանվանեմ՝ <Ա>, <Ն>, <Գ>, <Դ>, <Ս>, <Ե>, <Ձ>, <Վ>:

Կազմակերպելով համագործակցային ուսուցում, կփորձեմ նրանց մոտ ուժեղացնել համագործակցային հմտությունները՝ թիմային աշխատանք, և կնպաստեմ սովորողների համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացմանը (խմբային աշխատանք), սովորողների մոտ զարգացնել ստեղծագործական կարողություններ:

## Փորձարարական դասեր

### Փորձարարական դաս 1

Այսօրվա դասի թեման է՝ << Ը ձայնավորի ուղղագրությունը >> (դասապլանը տեղադրված է հավելված բաժնում): Դասաժամն սկսվեց ողջույնով, հաճախումների ստուգումով (3 աշակերտ բացակա էին), ստուգվեց և քննարկվեց տնային աշխատանքները: Այնուհետև կատարվեց բանավոր հարցում՝ կրկնելու անցած նյութը: Դասը քննարկելուց և ամփոփելուց հետո, առանձնացրեցի հետազոտվող <Ա>, <Ն>, <Գ>, <Դ>, <Ս>, <Ե>, <Ձ>, <Վ> աշակերտներին: Աշակերտներից բացի առանձնացրեցի բարձր առաջադիմություն ունեցող ևս չորս աշակերտների՝ <Մ>, <Յ>, <Է>, <Պ>: Ուսումնական նյութը բաժանեցի չորս մասի: Կազմեցի 4-ական խումբ, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկված էին 1-ական բարձր առաջադիմություն ունեցող և 2-ական միջին առաջադիմություն ունեցող աշակերտներ: Ամեն խմբի ներսում յուրաքանչյուր աշակերտ ընտրում է որևէ կետի ուսումնասիրությունը: Իմ հրահանգով բոլոր այն աշակերտները,ովքեր ընտրել էին 1-ին կետը,հավաքվում են մի տեղում, 2-րդ կետն ընտրածները՝ մեկ այլ տեղ և այլն: Այսինքն ձևավորվում են նոր խմբեր,որոնք պիտի աշխատեն միևնույն կետի շուրջ,պիտի ուշադիր կարդան այդ կետում գրվածը, ապա գտնեն բառեր, որոնք համապատասխանում են տվյալ կանոնին: Օրինակ՝ այն խումբը որը պիտի աշխատի առաջին կետի շուրջ,կանոնը կարդում է ,հետո հիշում և գրառում բառեր որոնք սկսվում են **ը** հնչյունով:Աշխատում

են նոր բառեր գտնել, որոնք դասագրքում նշված չեն: Այս աշխատանքը մի փոքր բարդացնում եմ՝ առաջարկելով այդ բառերից մի քանիսը գործածել բառակապակցությունների և նախադասությունների մեջ (տեղադրված է հավելված բաժնում)։ Տրվեց ժամանակ և աշակերտները սկսեցին աշխատել: Խումբն իր կատարած աշխատանքը գրառում է մեծ թղթերի վրա, գունավորում և փակցնում է դասասենյակի պատին: Երբ բոլոր խմբերն ավարտում են իրենց առաջադրանքի կատարումը, վերադառնում են նախկին խմբերը, հետո սկսում են շրջել դասասենյակով և դիտել փակցված թերթերը:

Հանձնարարվեց խմբերին համագործակցելով միմյանց հետ քննարկել աշխատանքները: Այն սովորողը, որը մասնակցել է այդ պաստառի ստեղծման և լրացման աշխատանքներին, բացատրություններ է տալիս տվյալ կանոնի և բերված օրինակների՝ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների վերաբերյալ: այսինքն նոր նյութն սովորում են անմիջապես դասարանում՝ միմյանց բացատրելով իրենց սովորածը: Թիրախային ութ աշակերտներին այս ընթացքում պահելով անընդհատ ուշադրության կենտրոնում:

Հավաքվեց աշխատանքները և դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով:

**Փորձարարական դաս 2**

Այսօրվա դասի թեման է՝ Հ.Ք. Անդերսեն <<Սոխակը>>, Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը (դասապլանը տեղադրված է հավելված բաժնում)։ Դասաժամն սկսվեց ողջույնով, հաճախումների ստուգումով (1 աշակերտ բացակա էր), ստուգվեց և քննարկվեց տնային աշխատանքները: Այնուհետև կրկնեցինք անցած նյութը: Քանի որ օրվա թեման բավականին մատչելի էր և հեշտ ընկալվող, այդ իսկ պատճառով թեման ամբողջովին հաղորդվեց աշակերտների մասնակցությամբ: Դասը քննարկելուց և ամփոփելուց հետո, հետազոտվող <Ա>, <Ն>,

<Գ>, <Դ>, <Ս>, <Ե>, <Չ>, <Վ> աշակերտներից յուրաքանչյուրին հանձնարարեցի հեքիաթից հատվածներ, որոնցից պետք է դուրս գրեին Գ-Կ-Ք ուղղագրության վերաբերող բառերը և ներկայացնեին դասընկերներին: Իսկ մյուս աշակերտները կարդում են դասը և պատասխանում հարցերին:

Իմ նպատակն է դասարանական ընդհանուր աշխատանքների մեջ օգնել թիրախավորված 8 աշակերտներին՝ հասկանալու և ճիշտ օգտագործելու իրենց ուժեղ և թույլ կողմերը, քաջալերել ,համբերատարությամբ տրամադրել նրանց դասին:

## Վերլուծություն

Աշակերտների մտածողությունը զարգացնելու համար՝ անցկացվեց 2 տարբերակված դասեր: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում այն աշակերտներին, որոնք ունեին դժվարություններ ողղագրությունից: Փորձարարական 2 դասերից հետո եկա այն եզրակացության, որ մայրենիի ժամերն ավելի արդյունավետեն դառնում ուսուցման փոխներգործուն և համագործակցային մեթոդների, բազմազան հնարների օգտագործման, դիդակտիկ և ստեղծագործական խաղերի կազմակերպման շնորհիվ: Խճանկար մեթոդն կիրառել իս եկա այն եզրակացության, որ աշակերտները համագործակցային աշխատանքներ կատարել իս, իրենց սովորածը սովորեցնում են միմյանց, միավորվում, ամբողջանում են գիտելիքները: Դասապրոցեսն ավելի հետաքրքիր է դառնում, իսկ նոր դասի մատուցումը ավելի ընկալելի և հեշտ, երբ կարևորվում է աշակերտի նկատմամբ անհատական մոտեցումը և խրախուսելի է դառնում գիտելիքների ձեռքբերումը:

## Գրականության ցանկ


1. Տեր-Գրիգորյան Ա.., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980,
2. Թամարա Թովմասյան, Լիլիթ Գրիգորյան Մայրենի ,,Մեթոդական ձեռնարկ,, , Երևան 2018
3. Դավիթ Գյուրջինյան, Թամար Ալեքսանյան, Աշոտ Գալստյան ,,Մայրենի 5,, դասարան Երևան 2011
4. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր 2008թ

**Հավելված**

**Դասապլան 1**

**Ուսուցիչ՝ Արմինե Գևորգյան**

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առարկա | **Մայրենի** | Ամսաթիվ | 12.5.2022թ. | կիսամյակ | 1 | Դասարան | 5ա |
| Թեմա | Ը ձայնավորի ուղղագրությունը | | | | | | |
| Օգտագործվող նյութեր | *5-րդ դասարանի դասագիրք, գրատախտակ, կավիճ, կպչուն թղթեր, գունավոր մարկերներ, պաստառ* | | | | | | |
| Դասի նպատակը | ա) իմանալ ը ձայնավորի ուղղագրությունը,<br>բ) կատարել բառային աշխատանք (բառապաշարի հարստացում),<br>գ) նոր սովորած բառերը կարողանալ կիրառել նախադասություններում,<br>դ) հանդուրժող լինել ամենատարբեր կարծիքների հանդեպ, լսել շարունակել միմյանց՝ առանց կրկնելու: | | | | | | |

| **Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ** | |
|---|---|
| **Վերջնարդյունքները** | *Աշակերտը կկարողանա.*<br>ա) կտիրապետի ը-ի ուղղագրության սկզբունքներին,, բ) կսովորի նոր բառեր,<br>գ) կկարողանա նոր սովորած բառերը կիրառել նախադասություններում:<br>Ուսուցչի ընթացիկ նպատակներ<br>Դասարանական ընդհանուր աշխատանքների մեջ օգնել թիրախավորված 8 աշակերտներին՝ հասկանալու և ճիշտ օգտագործելու իրենց ուժեղ և թույլ կողմերը, քաջալերել, համբերատարությամբ տրամադրել նրանց դասին: |

| **Գործողություն** | **Ուսումնական** | **Ուսումնական** | **Հարցադրումնե** | **Կիրառվող** |
|---|---|---|---|---|

| ներ (ժամ/տևողություն) | գործունեություն<br>**Աշակերտներ** | գործունեություն<br>**Ուսուցիչ** | ր | մեթոդ |
|---|---|---|---|---|
| Մուտք,ներկա-բացակա/3 րոպե/<br><br>Սկիզբ 5-7րոպե<br><br>25-30 րոպե<br><br>Ավարտ 5 րոպե | 2..*Լսում են, հարցեր տալիս տնային առաջադրանքներից*<br><br>Կատարում ենք վարժություններ: Վարժություններից դուրս ենք գրում դժվարություն ներկայացնող բառերը, հավելյալ աշխատում ենք այդ բառերի հետ<br><br>4. ներկայացնում են առաջադրանքները: Անդրադարձ է կատարվում նոր բառերին, դրանցով կազմվում են նախադասություններ Ուսուցչի օգնությամբ վերհիշում են | 1.*հաշվառում է կատարում,:*<br><br>2-*Անդրադարձ տնային առաջադրանքներին:*<br>Նոր դասի հաղորդում( օգտագործում ենք գրատախտակին գրված օրինակները :<br>բ) Ուսուցիչը և դասարանը միասին գրատախտակին ստանում են նոր դասի գծապատկերը<br>(բերում են այլ օրինակներ):<br>3 .*Մատուցում է նոր նյութը:*<br>4.*Պատասխանում հարցերին, հետևում աշխատանքներին և օգնում, եթե կարիք լինի:*<br><br>5.*Անհատապես նշում է աշակերտների յուրաքանչյուրի ձեռքբերումները դասի* | 1,Ե՞րբ է բառասկզբում գրվում ը, բերել օրինակներ:<br>2.Ե՞րբ է բառամիջում գրվում ը, բերել օրինակներ (մասնավորեցնել կնչ մասնիկներից հետո գրվող ը-ի դեպքերը):<br>3.Ի՞նչ ենք գրում բառավերջում ը լսելիս, բերել օրինակներ:<br><br>4-Եթե դեռևս նկատվում է սխալ ըմբռնումներ, ապա հարցերի միջոցով /դիմել աշակերտների օգնության/ վերացնել դրանք | Մտագրոհի մեթոդ:<br><br>Զույգերով աշխատանք |

<table>
<tr><td></td><td>ը-ի գրության առանձնահատկությունները:</td><td>արդյունքում, նշում բացթողումները:</td><td></td><td></td></tr>
<tr><td>Տնային աշխատանք</td><td colspan="4">Տնային աշխատանք են հանձնարարվում վարժություններ N5, 6, էջ 42 (քննարկվում է նաև տնային աշխատանքը):</td></tr>
</table>

Փոխտնօրեն -------------------------

**Դասապլան 2**

**Ուսուցիչ՝ Արմինե Գևորգյան**

<table>
<tr><td>Առարկա</td><td>Մայրենի</td><td>Ամսաթիվ</td><td>12.5.2022թ.</td><td>կիսամյակ</td><td>1</td><td>Դասարան</td><td>5</td></tr>
<tr><td>Թեմա</td><td colspan="7">Հ.Ք. Անդերսեն <<Սոխակը>>, Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը</td></tr>
<tr><td>Օգտագործվող նյութեր</td><td colspan="7">5-րդ դասարանի դասագիրք, գրատախտակ, կավիճ, կպչուն թղթեր, գունավոր մարկերներ, պաստառ</td></tr>
<tr><td>Դասի նպատակը</td><td colspan="7">Իմանա՝<br>• հեքիաթի արտահայտած հիմնական գաղափարը,<br>• Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրության ու ուղղախոսության առանձնահատկությունները<br>• Գ-Կ-Ք բաղաձայնների գրության և արտասանության միջև եղած տարբերությունները</td></tr>
<tr><td colspan="8">Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ</td></tr>
</table>

| Վերջնարդյունքները | *Աշակերտը կկարողանա*<br>• Ընկալել տեքստի արտահայտած հիմնական գաղափարը՝ ձևավորելով տեքստն ունկնդրելու կարողություն,<br>• Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրության ու ուղղախոսության կանոնները գործնականորեն կիրառել գրավոր և բանավոր խոսքում,<br>• Ձևավորել անսխալ գրելու ու կարդալու կարողություն: |
|---|---|

| **Գործողություններ**<br><br>**(ժամ/տևողություն)** | **Ուսումնական գործունեություն**<br><br>**Աշակերտներ** | **Ուսումնական գործունեություն**<br><br>**Ուսուցիչ** | **Հարցադրումներ** | **Կիրառվող մեթոդ** |
|---|---|---|---|---|
| Մուտք,ներկա-բացակա /3 րոպե/<br><br>Սկիզբ 5-7րոպե<br><br>25-30 րոպե | *2.Լսում են, հարցեր տալիս տնային առաջադրանքներից*<br><br>Կատարում ենք վարժություններ: Վարժություններից դուրս ենք գրում դժվարություն ներկայացնող բառերը, հավելյալ աշխատում ենք այդ բառերի հետ | *1.հաշվառում է կատարում:*<br><br>*2.Անդրադարձ տնային առաջադրանքներին:*<br><br>*3 .Մատուցում է նոր նյութը:*<br><br>*4.Պատասխանում հարցերին, հետևում աշխատանքներին և օգնում, եթե կարիք լինի:*<br><br>5.*Անհատապես* | 1.Ե՞րբ է բառամիջում և բառավերջում **գ** գրվում, սակայն **ք** արտասանվում<br>2.Ո՞ր բառերն են գրվում այնպես, ինչպե՞ս արտասանվում են:<br><br>4-Եթե դեռևս նկատվում է սխալ | Մտագրոհի մեթոդ:<br><br>Զույգերով աշխատանք<br><br>«Խճանկար կամ Զիգսո» |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ավարտ 5 րոպե | 4. ներկայացնում են առաջադրանքները։ Անդրադարձ է կատարվում նոր բառերին, դրանցով կազմվում են նախադասություններ։ Ուսուցչի օգնությամբ վերհիշում են Գ-Կ-Ք-ի գրության առանձնահատկությունները։ | *նշում է աշակերտներից յուրաքանչյուրի ձեռքբերումները դասի արդյունքում, նշում բացթողումները։* | ըմբռնումներ, ապա հարցերի միջոցով /դիմել աշակերտների օգնության/ վերացնել դրանք | |
| Տնային աշխատանք | Տնային աշխատանք են հանձնարարվում վարժություններ N1, 3, 6 էջ 73(քննարկվում է նաև տնային աշխատանքը)։ | | | |

Փոխտնօրեն …………..

**Առաջադրանք 1**

1.**Լրացնել ը տառը այն բառերում, որտեղ անհրաժեշտ է** ։

-ղձալի, -մբիշ, -նկույզ,-զբոսնել, -շտապել, -սպասել, -սփոփել, համ-նթաց, **գահ-նկեց**, գիրկ-նդխառն, զմ-ռսել, -նթերակա, ինքն-ստինքյան, չ-նկճվել, ամենա-նտիր, **մ-թնշաղ**, ան-նդունելի, **ակ-նդետ**, ան-նդմեջ, **որոտ-նդոստ**, ձ-կնկիթ, ամենա-նդունակ, չ-նդունել, մերթ-մերթ։

2. **Տրված բառերով կազմել բառակապակցություններ**։

**Գործընկեր, ընթանալ, ճեպընթաց, ընկույզ, ըմբիշ, ըղձալի**։

3.**Կազմել նախադասություններ՝ 1-ին առաջադրանքի թավ գրված բառերով**։

4.**Փակագծում տրված բառերում ավելացնել բաց թողնված ը տառը,որտեղ անհրաժեշտ է և տեղադրել տեքստի համապատասխան նախադասություններում:**

Գեղեցիկ է Լոռին իր ---------կատարներով,-------------գիշերներով,-----------գետակներով,------------ժողովրդով:Ահա թե ինչու ----------հանգստանալ այնտեղ:Տեղ հասանք ճեպընթաց գնացքով:------------ընտելացանք վայրին,ուր ամեն----------բնությունը փոխում էր գույները:Սքանչելի են Լոռու թե՛ -------, թե՛ լուսնյակ գիշերները,գույնզգույն ծաղիկները,ողջ բնաշխարհը:

(սր-նթաց,լուս-նկա,նախ-նտրեցինք,ակ-նթարթ,կոր-նթարդ,հյուր-նկալ,օր-ստորե,մթ-նկա)

**Առաջադրանք 2**

**Սոխակը**

1.Ամբողջ աշխարհում չէր գտնվի ավելի գեղեցիկ պալատ, քան Չինաստանի կայսեր ապարանքն էր:Դղյակը շրջապատված էր էլ ավելի շքեղ և հրաշալի մի այգով: Այգում աճում էին հրաշագեղ ծաղիկներ, իսկ դրանցից լավագույններն արծաթե զանգակներ ունեին,որոնք ամենաաննշան զեփյուռից անգամ մեղմ շրշում էին և իրենց կողմը դարձնում անցորդների հայացքները:

2.Այգուց դուրս փռված էր բարձր ծառերով և խոր լճերով մի անտառ, որը հասնում էր մինչև կապուտակ ծովի ափը: Ահա այդ անտառում ապրում էր սոխակը: Նա այնպես սքանչելի էր երգում,որ հոգսերի բեռան տակ կռացած խեղճ ձկնորսը,նրան լսելով,մոռանում էր իր ուռկանը:

3.Աշխարհի բոլոր ծագերից ճանապարհորդներ էին գալիս այդ կայսեր մայրաքաղաքը: Ապարանքն ու այգին զարմանում էին, իսկ սոխակը խիստ հուզում, ուղղակի ապշեցնում էր նրանց: Բայց ամենազարմանալին սոխակն է,-միաբերան ասում էին նրանք:

4.-Ի՞նչ սոխակ,- զարմացավ կայսրը,երբ նրա մոտ խոսք բացեց օտարերկրացի մի ճանապարհորդ: - Ես ինչու՞ չգիտեմ նրա մասին:

Նա իր մոտ կանչեց գլխավոր պալատականներին:

- Պարզվում է՝ մենք ունենք մի հիանալի թռչուն՝ սոխակ անունով: Ես ցանկանում եմ, որ այդ թռչունը հենց այսօր այստեղ լինի և երգի ինձ համար:

5. -Այդ թռչունի մասին ես չեմ լսել ,կորոնեմ և կգտնեմ:

Եվ ահա կայսեր առաջին պալատականը սկսեց վեր ու վար վազել սանդուղքներով, փնտրել դահլիճներում և միջանցքներում,հարցուփորձ անել բոլոր հանդիպողներին: Բայց պալատում ոչ ոք չէր լսել սոխակի մասին:

6.Վերջապես խոհանոցում գտան մի խեղճ աղջկա,որն ասաց.

-Աստվա՜ծ իմ, սոխա՜կ... Գիտե՞ք, թե ինչպե՛ս է երգում նա: Ամեն անգամ, երբ անտառով տուն գնալիս նստում եմ հանգստանալու,լսում եմ սոխակի երգը: Աչքերս լցվում են արտասուքով,իսկ սիրտս այպես է հրճվում, կարծես մայրս է ինձ համբուրում:

7.Բոլորը ճանապարհ ընկան դեպի անտառ: Յանկարծ անտառով մեկ տարածվեց սոխակի երգը:

-Ա՜յ,դա է սոխակը,լսեցե՛ք,լսեցե՛ք:Ահա և ինքը:

Աղջիկը մատով ցույց տվեց ծառի բարձր ճյուղին նստած թռչնակին:

- Մի՞թե սա է,- զարմացավ կայսրի առաջին նախարարը,- ի՜նչ հասարակ թռչուն է:

- Պստիկ սոխակ,- կանչեց փոքրիկ խոհարարուհին,- մեր ողորմած կայսրը կամենում է լսել ձեզ:

- Շատ ուրախ եմ,- պատասխանեց սոխակը և այնպես դայլայլեց, որ ուղղակի հրաշք էր:

8. Հսկայական դահլիճի մեջտեղում սոխակի համար տնկված էր մի ոսկե ձող: Բոլոր պալատականները հավաքվել էին խոհանոցի փոքրիկ աղջկա էլ թույլ էին տվել կանգնելու դահլիճի դռան շեմքին. այժմ նա պալատական խոհարարուհու կոչում էր ստացել:
Բոլորը զուգված և զարդարված էին և աչք չէին հեռացնում մոխրագույն փոքրիկ թռչունից: